ԱՆԿԱՍՏԵՂ[1]

(Տոմարական մի եզրույթի հետքերով)

Գայանե Սիմոնյան

Հայոց տոմարական մատենագրական ժառանգության մեջ մեզ են հասել «Պատճէն տոմարի հայոցի» բազմաթիվ խմբագրություններ, որոնցում հեղինակները տարբեր կանոններով ու միջոցներով որոշել են արևային տարվա եղանակները[2], երկնային (աստղագիտական) երևույթների[3] և տոների[4] ժամանակները՝ հայոց և՛ շարժական, և՛ անշարժ տոմարների ամիս-ամսաթվերով, ինչպես և բազմաթիվ այլ ժողովուրդների, մասնավորաբար հուլյան, անշարժ տոմարներով:

Եթե տարվա եղանակները, տոների անվանումները որոշակիորեն հասկանալի ու ըմբռնելի հասկացություններ են, ապա **Անկաստեղ**[5] ու **Ելաստեղ**[6] տոմարական եզրույթները հիմնականում մանրազնին քննության առարկա չեն դարձել կամ էլ պարզապես հասկացվել են իբրև **որևէ** աստղի արեգակնային **անկումը** կամ արեգակնային ամբարձումը՝ **ծագումը, ելքը**: Եզրույթները կազմությամբ բարդ բառեր են, որոնց երկրորդ արմատները տարակույս չեն առաջացնում. նշանակում են աստղ: Այս իսկ պատճառով փորձեր են արվել այդ հասկացությունները կապել տարբեր աստղերի կամ աստեղատների հետ[7]: Եզրույթների երկրորդ

---

[1] Սույն հոդվածը հրատարակվում է 15T-6D145 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

[2] Գարնանամուտ, Ամառնամուտ, Աշնանամուտ, Ձմեռնամուտ:

[3] Անկաստեղ, Ելաստեղ կամ Անկաստղ, Ելաստղ:

[4] Յայտնութիւն, Տեառնընդառաջ, Աւետեաց Աստուածածնի, Վերափոխումն Աստուածածնի, Սուրբ խաչ ևն:

[5] Անկաստեղ (զանկաստեղ), անկաստղ, անկբազմաստեղ (զանկբազմաստեղ):

[6] Ելաստեղ (զելաստեղ), Ել, Ելաստղ (ելաստղ):

[7] Ստ. Լեհացուն վկայակոչելով՝ Էդ. Դյուրոլիեն փորձել է դրանք կապել **Բոյլք- Բազումք** աստեղատան հետ (**Ed. Dulaurier,** Rechercyes sur la Chronologies Arménienn, Paris, 1859, էջ 180-181), Ղ. Ալիշանը՝ **Շնաստղի (Ղ. Ալիշան,** Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 130-131**)**: Գ. Բրուտյանը, խոսելով քննվող բառերի մասին գրում է, որ Հայաստանում արեգակնային անկումների դիտումների մասին

արմատների գրաբարյան ուղղական հոլովում աստեղ[1] ձևով գրությունը, որը կարող էր սեռական հոլովաձևի տպավորություն թողնել, թյուրըմբռնման պատճառ է դարձել, և դրանք մեկնվել են՝ իբրև աստղի արեգակնային անկում կամ արեգակնային ծագում: Թեև հեղինակը նշում է, որ ոչ մի հիմք չկա այդպես կարծելու:

Առաջին հայացքից թվում է, որ, պարզապես, Անկաստեղ և Ելաստեղ եզրույթները հայոց տոմարի պատճեններում գրանցվել են հենց այնպես, քանի որ դրանց հետ մյուսներն առանձնապես չեն հարաբերվում կամ էլ նրանցով պայմանավորված չեն այլ տոմարական իրողություններ:

Սակայն, եթե **Անկաստեղն** ու **Ելաստեղը**[2] կարևոր նշանակություն չունենային, ապա նախ տեղ չէին գրավի հայոց տոմարի պատճեններում[3] և երկրորդ՝ չէին ստեղծվի հատուկ կանոններ[4] դրանց ժամանակի որոշման համար:

Տոմարագիտությունը մի կողմից՝ իբրև ժամանակը հաշվելու ճշգրիտ գիտություն, որ հենվում է աստղագիտության ու մաթեմատիկայի վրա, մյուս կողմից՝ իբրև բնատնտեսությունը կարգավորելու ու կրոնական հավատալիքները սպասարկող կայուն փորձառույթի կանոնակարգման միջոց, բնականաբար, հստակորեն գործ ունի ճշգրիտ, անշփոթելի իրողությունների, երևույթների ու հասկացությունների և նրանց անվանումների հետ: Հետևաբար հնարավոր չէր, որ տոմարական «Պատճէններում»

վկայող փաստեր չունենք: Մինչդեռ կան ազգագրական և որոշ այլ տվյալներ: Հեղինակն այս անվանումները փորձում է կապել **Բույլքի** գլխավոր աստղ **Ալկիոնի** արեգակնային անկման և ամբարձման հետ (**Գ. Բրուտեան**, Օրացոյց Հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 149-151):

[1] Այստեղ պարզապես արմատական **ե-ն** հնչյունափոխվել է **ը** – գաղտնավանկի: Բնիկ հայ. բառ՝ հնախոսական ուղ. stér ձևից: Արմատական ե-ն պահպանված է հնդեվրոպական այլ լեզուներում՝ stella ևն (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, էջ 278):

[2] Ելաստեղը այլ ուսումնասիրության նյութ է:

[3] Օր., 1999 թվ. գրչագիր՝ Ի ապրիլի ի **ԺԴ անկաստեղ** է հանապազ: Ի Մայիսի **ԻԴ ելաստեղ** է հանապազ: Ձեռ. թիվ. 4454՝ Ապրիլ Է աւետիք Աստուածածնին, ԺԴ **անկաստղ** է ..., մայիս ԻԱ արեգակն յեկաւորն մտանէ, **ԻԴ ելաստղ** է: 3082 գրչ.՝ Ահկի **Է Անկաստեղ** է: Մարերի **ԺԷ ելաստեղ**:

[4] Այսպես օր., 1126 թվականին ընդօրինակված Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի»-ում կարդում ենք. «**Զանկբազմաստեղն** այսպէս [արա՛]. Կա՛լ ԺԶ եւ զնահանջն, տո՛ւր ի Հոռի յամսամտէն առաջ, եւ գտանես: [**Զելն** այսպէս արա՛] Կա՛լ ԻԶ եւ նահանջն տուր Սահմի յամսամտէ յառաջ, **Ել** է»:

տեղ գտնեին այնպիսի անվանումներ, որոնք երկբայության մեջ կարող էին գցել ոչ միայն ընթերցողին, առավել ևս տոմարագետներին, որոնք պիտի կազմեին ժամանակի օրացույց-տոնացույցերը՝ ոչ միայն կրոնական տոները ճիշտ ժամանակին կատարելու համար, այլև աչքի առաջ ունենային երկրագործական տարվա պատկերը՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար: Ահա ելնելով այն համոզումից, որ այս եզրույթները վերաբերում են ոչ թե **ինչ որ** աստղերի (Բույլք-Բազումք, Շնկան, Ալկիոն) անկմանն ու ծագմանը՝ ելքին, կարծում ենք, որ **Անկաստղն ու Ելաստղը** այլ աստղերի կամ աստղաբույլերի կոնկրետ անվանումներ են: Այս տրամաբանությամբ՝ **Անկաստեղը** պետք է հասկանալ **Անկ կամ Զանկ** անունով աստղի կամ աստեղատան անվանում, իսկ **Ելաստղը՝ Ել** կամ Եղ անունով աստղի կամ աստեղատան անվանում, ինչպես որ հանդիպում ենք տարբեր գրչագրերում կամ մեկնություններում: Եվ քանի որ հանդիպում ենք նաև Անկաստղի Զանկբազմաստեղ հոմանիշին, ապա այս դեպքում վստահորեն կարելի է ասել, որ խոսքը համաստեղության մասին է: Այսպես, բնագրերում հանդիպում ենք նման ձևակերպումների՝ «Ահկի **Է (7) Անկաստեղ** է: Մարերի **ԺԷ** (17) **ելաստեղ»**, «Կա՛լ զյայտնութեան՝ աւելեօքն, Գ՛ ած, ի Տրէ՛ տուր, անգաստեղ է»[1], «Կա՛լ զամսանահանջն՝ աւելեօքն, Գ՛ ած, ի արա՛ց տուր, անկաստեղ է»[2] ևն: Հայոց տոմարի տարբեր ամիս-ամսաթվերին զուգահեռ բերված է հուլյան հին տոմարի ապրիլի 14-ը:

Եվ Անկաստղ, Անկաստեղ, Զանկբազմաստեղ տոմարական եզրույթների առաջին բառարմատների քննությամբ կփորձենք դրանք կապել հենց իրենց անվանակիր աստղին կամ համաստեղությանը, ինչպես նաև կրոնապաշտամունքային իրողություններին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայոց տոմարը շատ հին է, ապա այդ անվանումների բառարմատները փորձեցինք գտնել նաև հեթանոսական, դիցաբանական հավատալիքների շերտերում պահպանված անուններում՝ չնայած չի բացառվում նաև դրանց ավելի հին ու վաղնջական ծագումը՝ կապված հնոց հավատքին ու պաշտամունքին:

Մյուս կողմից էլ՝ քանի որ Հայկական լեռնաշխարհը լինելով մարդկության բնօրրաններից ու քաղաքակրթության օջախներից մեկը, ուր

---

[1] Ձեռ. թիվ 2036, էջ 8 ա:

[2] Ձեռ. թիվ 6920:

զարգացած է եղել աստղագիտությունը, ապա պետք է որոնել այդ անունները հայերին ծանոթ աստղերի անվանումների մեջ:

Ինչպես հայտնի է, երբ տոմարական միավորները և նրանց հաջորդականությունը վերածվում է «կերպարի» և «սյուժեի», ձևավորվում է օրացույցային, ավելի ճիշտ, տոմարական առասպելաբանություն: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայոց առասպելաբանությունը մեծավ մասամբ տոմարական է, ինչը նախկինում այնքան էլ ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից:

Տոմարական առասպելաբանության հենքի վրա զարգանում է տոմարական բանահյուսություն (հանելուկներ, ասացվածքներ, հորոսկոպներ, մարգարեություններ, պոեմներ, հեքիաթներ, լեգենդներ, որոնք ևս ուշագրավ տեղեկություններ են պահպանում տոմարական իրողությունների վերաբերյալ):

Տոմարը, իբրև ժամանակահատվածների հաշվման համակարգ, առասպելաբանության մեջ հանդես է գալիս որպես բնական երևույթների առասպելական գիտակցման ձևերից մեկը: Այդ իսկ պատճառով տոմարն արտահայտվում է խորհրդանիշների միջոցով, առնչվում բնության ուժերին (պտտահողմ, անձրև ևն), կենդանիներին, բույսերին, անգամ կենցաղային իրերին (սանդ, իլիկ ևն), մարդկային մարմնակազմությամբ (գլխից մինչև ոտնաթաթ):

Հայ մատենագրությունն ու ավանդությունը հայկական տոմարի ծագումը կապում են Հայկ նահապետի անվանը[1], որով էլ այն սերտորեն առնչվում է առասպելաբանությանը: Ըստ մատենագրական տեղեկությունների՝ հայոց ամսանունները առասպելական Հայկ նահապետի ուստրերի ու դուստրերի անուններն են, ուստի ամսանունները միանշանակ առասպելական անուններ են:

Չի բացառվում, որ մոռացության դատապարտված առասպելական հատուկ անուններ կարող են եղած լինել նաև տոմարական եզրույթ դարձած Անկաստեղ-Զանկաստեղը և Ելաստեղ-Եղաստղը, որոնց առաջին արմատներն **Անկ կամ Զանկ**ն ու **Ել կամ Եղ**ն են:

Մեզ շրջապատող ողջ նյութական ու աննյութական աշխարհը՝ լինի գոյ, հատկանիշ, թիվ-քանակ, գործողություն թե գործողության հատկա-

---

[1] Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 224:

նիշ, միավորված են մի ընդհանուր հատկանիշով՝ դրանք ունեն անուններ, որոնք դրանց էության կրողներն են: Այդ իսկ պատճառով մեր հետազոտությունը փորձենք սկսել այդ տոմարական եզրույթների առաջին արմատների՝ իբրև էության կրողների[1] քննությունից:

Իրապես էլ, անունը որևէ անձի կամ երևույթի կամ հասկացության ամենակարևոր հատկանիշն է, որը տեղ և ժամանակ չունի, քանզի միևնույն անունը մեզ կարող է հանդիպել տեղի ու ժամանակի այնպիսի լայն կտրվածքում, որ զարմանք է հարուցում: Իհարկե, և՛ տեղի, և՛ ժամանակի փոփոխությունների ընթացքում այն կարող է կրել այնպիսի ձևափոխություն ու իմաստափոխություն, որ դառնա անճանաչելի, մոռացության մատնվեն այդ անուններից շատերի նախնական իմաստները, ձեռք բերեն նորանոր իմաստներ, երբեմն դառնան սոսկ ձևական արտահայտություն կամ ավանդաբար փոխանցվող իրողություն, որի մասին վերջին կրողների մոտ արդեն կարևորված են անմիջական նախորդ շրջանում դրան վերագրված հատկանիշները: Սակայն փոփոխությունների օրինաչափությունների իմացությունը հնարավորություն է ստեղծում վերականգնելու այն նախնական, արխայիկ ու հին իմաստային դաշտը, որում ստեղծվել ու գործել է անունը:

Մինչ Անկ կամ Զանկ արմատի քննությունն ու առասպելաբանության ոլորտում մեզ հետաքրքրող բառիմաստի արծարծումը, առաջին հերթին հիշենք հայասական դիցարանի մի աստվածանուն՝ Un(a)gašta –ն[2], որը մեր կարծիքով նույն Անկ(գ)աստղն է:

Բառի արմատը՝ Un(a)g- չի բացատրել Գ. Ղափանցյանը[3], իսկ Գ. Ջահուկյանը առնչում է «օծել» իմաստի հետ և բառը դիտում իբրև

---

[1] Ըստ հին հայ քերականների՝ անուն մեկնվում է իբրև 1. անունելի «Ասի անունդ անըմբռնելի, վասն զի արդարև իսկ անտեղի և անժամանակ է», 2. էություն ունեցող:

[2] **Г. Джаукян,** Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, էջ 53:

[3] Թեև Գ. Ղափանցյանը կարծում է, որ հայասական լեզուն հնդեվրոպական չէ և հայասական աստվածանունները ոչ մի ընդհանրություն չունեն հայկական աստվածանունների հետ, սակայն, Գ. Ջահուկյանը մերժում է այդ կարծիքը, հատկապես նշելով ընդհանրական աստվածանուններ՝ Տարքու և Տորք, Արա ևն (**Г. Джаукян**, նշվ. աշխ., էջ 65-66): Մեր կարծիքով, Un(a)gašta հայասական աստվածանվան Անգ արմատը պահպանված է նաև հայոց որոտաբեր աստվածության Տորք Անգեղ անվան մեջ:

օծյալ՝Χρῖστός[1]:

Հայասական դիցարանում Անկաստեղը փաստված է իբրև աստվածանուն «օծյալ» իմաստով, որը քրիստոնեության մեջ Սուրբ Երրորդության դեմքերից մեկի՝ Որդի Աստծու հատկանիշն է, և փաստված Քրիստոսի մարդեղանալուց շատ ու շատ առաջ:

Ներկայացնենք նախ Անկաստեղ-Զանկբազմաստեղ եզրույթի ԱՆԿ արմատը:

Բնիկ հայերեն **ԱՆԿ** բայարմատը առանձին չի գործածվում, այլ միայն բարդ բառերում, որոնցից ներկայացնենք մեր հետաքրքրությունների շրջանակում գտնվող որոշ բառեր:

***ԱՆԿԱՆ**[2] (գրուած է նաև անգան) «սանդ, հավան», ... Գառ. «մեծ փայտի սանդ կորկոտ, բրինձ ծեծելու համար», ... նոյնն է անգանակ՝ «կոնք, տաշտ» նշանակությամբ: Իսկ «կոնք, տաշտ» բառի հոմանիշներից մեկը «նաւ»ն է: Անկան-անգանակ-սանդ-հավան[գ] աշխատանքային գործիքը առանց թակի չի լինում:

Սանդի թակը կամ սանդիկոթը, որ միշտ պատրաստվել է կարծր փայտից, կոչվել է Տոռն[3] կամ տորն, բնիկ հայերեն բառ, որ առաջացել է հնախոսական **doru** «փայտ» ձևից, հատկապես համեմատելի է հունարեն δόρυ «նաւ, նիզակաբուն, ճոկան, մական» և սանսկրիտ drδna «կոնք, տաշտ»: Այն ձևով նման է մականի կամ գավազանի: Սակայն ընտրենք հոմանիշներից նիզակաբունը, որն ուղղակիորեն առնչվում է նաև Հայաստանի քրիստոնեական սրբություններից մեկին՝ սբ. գեղարդին[4]:

Սանդն ու սանդիկոթը (նիզակաբուն) կամ հավանգն ու իր կոթը միասին հիշեցնում են մեջքի վրա շրջած զանգն ու իր լեզվակը[5]:

+ԱՆԿԱՆԻԼ[6] **-** բայական իմաստով նշանակում է «**ընկնել, մայր**

---

[1] **Գ. Джаукян,** նշվ. աշխ., էջ 53-54: Օծյալ - Քրիստոսը քանի որ Դավթի ցեղից էր, և մենք, ինչպես կտեսնենք, Անկաստեղը առնչում ենք «ԿԱՐԱՊ» կամ «ՔՆԱՐ» համաստեղությանը և Դավթին, չի բացառվում, որ հայասական պանթեոնում Անկաստեղին համապատասխանող աստվածության անվանումն է:

[2] **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 197:

[3] Անդ, հ. IV, էջ 421:

[4] Գեղարդը Ղուկիանոս անունով հարյուրապետի նիզակի ծայրն է, որով ստուգվեց Հիսուսի մարդկային ու աստվածային էությունը:

[5] Նկարը տե՛ս հավելվածում:

[6] Նույն տեղում, էջ 197-199:

մտնել», հանդիպում է նաև ինչյունափոխված **ԱՆԳ** արմատով և ածանցված բառերով, որտեղ վերջանալու, սպառվելու գաղափար է արտահայտում: Սակայն բառն ունի մեկ տասնյակից ավելի իմաստներ, որոնցից առավել հետաքրքիրը մեզ համար 14-րդն է՝ «գործել, հյուսել, բանել», որից՝ անկած «հյուսած բան, սարդի ոստայն»:

Անկ արմատից ձևավորված 14-րդ և անկած բառի իմաստները հըստակ հարաբերակցություն են ստեղծում Զևսի գլխից ծնված Աթենասի[1] և ասեղնագործուհի - ջուլիակուհի Արաքնեի հետ[2], ում Աթենասը վերածում է սարդի: Ջուլիակուհու անունով Հայաստանում տարածված կրիաները կոչվում են Արաքնե կրիաներ. նրանց մեջքի զարդանախշը սարդոստայն է հիշեցնում: Աթենասի ատրիբուտները՝ նիզակը (սանդիկոթ), կրիայի ու կարապի տեսքով սաղավարտը վկայում են Աթենասի ու Արաքնեի նույնության մասին: Ըստ այսմ՝ մենք կարող ենք հավասարության նշան դնել անկի-սարդի-կրիայի ու կարապի միջև:

Մյուս կողմից էլ՝ ծածկապարանոց կրիաների մի ենթակարգում կա Անգղային կրիաների ընտանիք (Грифовая черепаха-Macroclemys temminncki)[3], որը թույլ է տալիս հարաբերակցելու անգղին ու կրիային:

Հետևում է, որ անգղը - կրիան - սարդն ու կարապը, իբրև խորհրդանիշ, ուղղակիորեն առնչվում են մեզ հետաքրքրող եզրույթին:

Հաջորդ բառն +ԱՆԿԻԽՆ[4] - «անկյուն, քունջ, քոշա», որի արմատի

---

[1] Մ.թ.ա 5-4-րդ դարերի մարմարե արձաններում, որմնանկարներում կամ նկարազարդումներում Աթենասը հաստակորեն միավորում է «ՋՐՀՈՍ»՝ «Նա. ում ձեռքին սափոր է», «ՁԿՆԵՐ» կենդանակերպերը: Սակայն նրա սպառազինությունն է շատ կարևոր, ձեռքին գավազան (նիզակակոթ գեղադով), գլխին սաղավարտ, որի գլուխը ծածկող մասը՝ ականջակալով, որ, պարզապես, կրիա է, իսկ ցցունքը՝ կարապ, ձեռքին ունի վահան: (Мифы народов мира, энциклопедия, т. 1, Москва, 1987, с. 126-127):

[2] Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի հերոսուհին կրում է հայոց հեթանոսական պանթեոնի գերագույն աստվածուհու՝ Անահիտ միֆական անունը: Նա ջուլիակուհի է, այսինքն սարդ աստվածուհու կարևորագույն հատկանիշների կրող, Վաչագանին իր զորքերով դուրս է բերում անդրաշխարհից: Մի քանի անգամ սափորը ջուր է լցնում և դատարկում, մինչև Վաչագանին ջուր տալը: Մեկնությունը չենք շարունակում չշեղվելու համար:

[3] **Ռ. Ղազարյան**, Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան, գիրք Գ, սողուններ ու երկկենցաղներ, Եր. 1998, էջ 3:

[4] Նույն տեղում, էջ 200:

բուն նշանակությունն է «ծռիլ, կորանալ»[1]: Այս բառի բուն նշանակությունը ևս կարող ենք առնչել սարդի կամ կրիայի ճանկերի հետ: Հատկապես, որ սարդերն իրենց ոստայնը հյուսում են անկյուններում:

Մենք այստեղ չենք քննարկելու, թե **ԱՆԿ** արմատը տարբեր բառերում հնախոսական ինչ արմատներից է առաջացել, սակայն, մեր կարծիքով, երբեմն արտասանական համանունությունը հնարավոր է դարձրել տարբեր իմաստակիր բառերը (օմոֆոն բառեր) զարգացման ինչ-որ ժամանակահատվածում այլաբանորեն միավորելու միմյանց հետ: Մյուս կողմից էլ միավորելու տարբեր իմաստակիր բառեր օր., սանդ և սանդիկոթ (նիզակաբուն), անգղ, կրիա, սարդ,[2] վահան[3], զանգ՝ թեկուզև նկարագրական կամ այլաբանորեն տոմարում ունեցած դերակատարության առումով:

Շարունակենք քննությունը:

ԱՆԳՂ-ԱՆԿՂ[4]- «**մի տեսակ գիշակեր թռչուն**», ՍԳր. ինչպես նաև **ԱՆԾԵՂ**- Վեցօրյայ, 171, 174: Սրա հետ են համեմատվում սկիւթիական **մծrծγō** «**կարապ**» բառը, որ ավանդում է Հեսիքիոսը: Ն. Ադոնցը դրա մասին գրում է. «Ըստ սկիւթացւոց «**կարապ**», **անգելոս, հրեշտակ,** պարսկ. արքայական սուրհանդակ: **Անգեղաձև** մի **աստված**, որ հետո աստվածների սուրհանդակի պաշտոն ստացավ, լազերն ունեն այլ թռչունի անուն՝ «**անկե**»: Ղրբ. բրբռ. **Անգ**:

---

[1] Ծուռ և կոր լինելու հատկանիշը բնորոշ է սարդի և կրիայի ճանկերին. Սարդին անվանում են հուն. ὄγκος, «կեռիկ», լատ. uncus «կեռ կամ ծուռ[1]», այն է՝ ծուռոտ:

[2] Այս բառին կանդրադառնանք մեր մեկ այլ հոդվածում Նաւասարդ ամսանվան բացատրության ժամանակ:

[3] Այս բառը անվերապահորեն առնչվում է Հայկ նահապետի (դրանով իսկ հայոց տոմարին) որդիներից առաջինի՝ Կադմոսի (Kadmaša ?-հայասական քաղաքանուն), անվանը, որը թարգմանաբար (Հեսիքիոս) նշանակում է «նիզակ», «բլուր», «վահան», ինչպես և «պաշտպանել», «պահպանել»: Առնչություն ունի գրերի և մետաղը մշակելու եղանակի հետ: **Г. Джаукян**, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, էջ 68: Մետաղամշակության հետ կապված՝ դարբնությունը, ապա խաշած ցորենը սանդի մեջ թեփահան անելու համար ծեծելը, զանգը հարելը, լարավոր երաժշտական գործիք նվագելը կարող ենք արտահայտել հայերեն կտտել («զարնել», «բախել» «ծեծել», ինչպես և «պաշտպանել») բառով, որի **ԿՈՒՏ** արմատը գուցե և կապ ունի Կադմոս անվան հետ:

[4] **Հր. Աճառյան**, նշվ, աշխ., հ. I, էջ 184:

Այստեղից հետևություն՝ առնչվում է աստված և հրեշտակ իմաստներին:

***ԱՆԳՂ** «Ամանի, յատկապէս զամբիւղի ականջ, կանթ, բռնելատեղ, ունկ»: Հ. Աճառյանն այս բառին հավասար է դիտում պարսկերեն «օղակ, յոր անցանէ կոճակ, լամբակ, կոճակամայր» իմաստ արտահայտող angul բառը: Ուրիշները կապում են հունարեն **«կոր, ճանկ»**, գնչ. ու գերմ. **«կարթ»**[1], լատ. **«անկյուն»** բառերի հետ[2]:

Ի մի բերելով վերոգրյալ ԱՆԿ արմատի նշանակությունները՝ ասենք, որ այն առնչվեց օծյալ, աստված, անկան-անգանակ-հավան[գ]-սանդ (շրջված զանգ) և սանդիկոթ-Տոռն-(տոռնադո-պտտահողմ ?-Գ.Ս.)- «նաւ, նիզակաբուն, ճոկան, մական», ծուռ, կոր, ճանկ, կարթ (կեռիկ), անկյուն, գործել, հյուսել բանել», որից՝ անկած «հյուսած բան, սարդի ոստայն»-սարդ, անգղ, կրիա, կարապ, վահան և հրեշտակ, ընկնել, մայր մտնել, բառերին: Խորաթափանց լինելու դեպքում կնկատենք, որ ԱՆԿ արմատի բոլոր իմաստները ներքին անտեսանելի թելերով միահյուսված են:

Հայոց հեթանոսական պաշտամունքում ուղղակիորեն ու հստակ Անկաստեղ կամ Զանկբազմաստեղ պաշտամունքային որևէ տոն կամ տոնակատարություն չի պահպանված[3]: Սակայն առասպելաբանությունը թույլ է տալիս գտնելու համապատասխան առասպելական կերպարներ ու անուններ, որոնք հնարավորություն են տալիս բացատրելու այս տոմարական եզրույթի անվանումը:

Այժմ դառնանք դիցաբանությանը:

Մեր կարծիքով, ԱՆԿ արմատը պահպանված է առաջինը՝ **Տորք Անգեղ**[4] և երկրորդը՝ արդեն Հայաստանում քրիստոնեության ընդունման նախահիմքերում ընկած իրադարձությունների կարևորագույն դերակատարներից մեկի՝ **Անակ Պարթևի, ում որդին էր Գրիգոր Լուսավորիչը**, անուններում:

---

[1] Կեռ, կեռիկ, որով ձուկ են որսում:

[2] **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., հ. I, էջ 184:

[3] Թերևս այդ անվանումները և նրանց հետ կապված պատկերացումները անցել են քրիստոնեական առասպելաբանություն և որոշակի փոփոխություններ կրել՝ ինչն ավելի է դժվարացնում խնդիրը:

[4] Վաղարշակն է նրան կարգում Արևմտից կուսակալ: Նրանից է սերվել Անգեղ տուն նախարարությունը:

Առասպելական անվան միջոցով այս անձերը դարձել են ինչ-որ երևույթների կամ անձերի էության կրողները:

Վերհիշենք, թե մեր պատմիչներն ինչ են հաղորդում **Տորք Անգեղի** մասին:

Մովսես Խորենացին գրում է. «Իսկ զայր խոժոռագեղ եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնահայեաց, ի զաւակ է **Պասքամայ**[1], ի Հայկայ թոռնէ, Տուրք (Տորք) անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ եւ ուժով, հաստատէ **կուսակալ արեւմտից**[2]. **եւ յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն**[3]: Բայց եթէ կամիս՝ ստեմ եւ ես յա-

---

[1] **Պասքամ** – ար., ծագումն անհայտ (**Հր. Աճառյան**, Արմատ. բառարան, հ. Դ, էջ 228): Մեր կարծիքով, այս անունը առնչվում է եբրայական պասեք՝ **բեսախ**, **անցք կամ ելք** (անցում ձմեռվանից գարուն), **զատիկ** հասկացության հետ, որը կատարվել է յոթօրեքով կամ ութօրեքով: Երկրորդ օրը **գարու** հնձի երախայրիքը մատուցվել է տաճարին: Այս տոնը Մովսեսի ժամանակներից կատարվել է **ապիպ** ամսին, որը հետո կոչվեց **Նիսան** և դարձավ առաջին ամիսը: Չմանրամասնելով Զատկի նախաքրիստոնեական և քրիստոնեական առանձնահատկությունները՝ միայն կարևորենք նրա **գարնանամտի**, **գարու, այն է՝ հացահատիկի հնձի** հետ կապված լինելը և հրեական առաջին ամսին՝ **ապիպ** ապա **նիսանին 1 (= մարտի 22)** համապատասխանելը:

[2] Մեր պատկերացումներով արևմուտքն անվերապահորեն պետք է խորհրդանշի մահն ու անդրաշխարհը, և լինել նրա կուսակալը, կնշանակի լինել անդրաշխարհի տիրակալը, ինչպիսին էր օր., հռոմ. դիցաբանության մեջ Հադը կամ Հադեսը = **Օրփեոսը, որի** նշանակներից մեկն էլ **կրիան** է: **Հայոց աստղագիտության պատմության մեջ աստղերից մեկը կոչվում է «ԿՐԻԱ»: Կարելի է այն կապել մեզանում Տորք Անգեղի պաշտամունքի հետ, հատկապես որ Քասախի կիրճի ձախ ափին, դեմքով դեպի արևմուտք, պահպանվել են հսկա կրիաների քանդակներ, որոնց վրա հղկված սանդեր կան փորված: Դրանք դեռևս ուսումնասիրված չեն հնագետների կողմից: Կրիաների կմախքներ են դուրս եկել նաև Հայաստանում պեղված որոշ դամբարաններից (Ըստ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պ. Ավետիսյանի բանավոր հաղորդման):**

[3] Այստեղ Մովսես **Խորենացին** փորձում է **Անգեղ** բառի ժողովրդական ստուգաբանությամբ, շեշտադրելով տգեղությունը, շեղել ուշադրությունը **Անգեղի** պաշտամունքից և ջնջել հեթանոսական հավատալիքների հետքերը, որն առավել ընդգծված է երևում հետագա տողերում, երբ խոսում է նրա՝ ժայռերին փորագրած պատկերների մասին, նշելով **արծիվներին**, սակայն դարձյալ լռում է **Անգղի** մասին և դրա փոխարեն գրում՝ «**զայսպիսիս**», այսինքն՝ **արծվակերպներին**, որոնց դասին է պատկանում անգղը: Գ. Ջահուկյանը չի բացառում, որ Անգեղ տունը նշանակում է «Անգղի տուն», սակայն հակ-

ղագս նորա անյաջ եւ փցուն, որպէս եւ Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճկի հարիւր եւ քսան փղոց ոյժ ասեն ունել: Քանզի կարի իմն անյարմար թուէին եւ նմա երգ բանից վասն ուժեղութեանն եւ սրտեայ լինելոյն. որք ոչ Սամսոնի եւ ոչ Հերակլեայ եւ ոչ Սագճկին յարմարին այս զրոյցք: Քանզի երգէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռաւք, ուր ոչ գոյր **գեզութիւն** (**դեզութիւն**)[1], եւ ճեղքել ըստ կամաց մեծ եւ փոքր. եւ քերել եղնգամբքն եւ կազմել որպես տախտակ, եւ **գրել**[2] նոյնպես **եղնգամբք**[3] իւրովք **արծուիս եւ այլս այսպիսիս**[4]: Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ **նաւաց** թշնամեաց դիմէ ի վերայ. եւ ի խաղալն նոցա ի խորն իբրեւ ասպարէզս **ութ** (ութուտասն) եւ սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու, ասեն, վէմս բլրաձեւս, եւ ձգէ զկնի. եւ ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, եւ ամբարձումն ալեացն, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս: Ո՛հ, կարի է առասպելս, այլ եւ առասպելաց առասպել: Բայց քեզ զի± է. քանզի էր արդարեւ **սաստիկ հզաւր եւ այսպիսեայց զրուցաց արժանի**»[5]:

Ինչպես տեսնում ենք, պատմահայրը Անգեղ բառը ստուգաբանում է «վասն առաւել ժահադիմութեանն՝ խոժոռագեղ եւ բարձր եւ կոպտա-

---

ված է բացատրելու, որ առաջացել է հնդեվրոպական *anko-lo *ank, *ang՝ «ծռել, թեքել» արմատից (**Г. Джаукян**, նշվ. աշխ., էջ 76-77): Մյուս դեպքում էլ տունը տոմարական իմաստով վերաբերում է նաև ամիսներին համապատասխան համաստեղություններին (ՏԱՆՈՒՏԵՐ):

[1] Այս բառը, մեր կարծիքով, նույնական գիշերային **գիզակ կամ դիզակ** ժամանվանը:

[2] Արդյոք **Խորենացին** պատահականորեն է գործածել «**գրել**» բայը. չէ± որ այս պատմությունը վերաբերում է հայոց նախագրային շրջանին: Կա՛մ այս դեպքում այլաբանորեն պետք է հասկանալ նկարելու իմաստով, կա՛մ պատկերագիր նկատի ունենալ, կա՛մ անուղղակիորեն կապել **Տիրի** պաշտամունքի հետ՝ իբրև գրի աստվածություն:

[3] **ԵՂՈՒՆԳՆ ԿԱՄ ԵՂՈՒՆԿՆ**, որի հոմանիշներն են ճանկ, մագիլ, որից առաջացել է նաև եղնգաքարը կամ սարդեղունգը, որը ժողովդի մեջ ունի «սատանի եղունգ» անվանումը: Հնդեվրոպական ցեղակից լեզուներում առկա **ն** և **գ** կամ կ բաղաձայններն ունեն արմատական նշանակություն «ճանկ կամ քերիչ»:

[4] Այս դեպքում ուղղակիորեն տեղեկություն է հաղորդվում հայոց պաշտամունքային թռչունների մասին՝ ա**րծվի** և ա**րծվանմանների**, որոնցից է նաև **անգղը**, որի մասին հեղինակը ուղղակիորեն լռել է, ներկայացնելով միայն նրա արտաքին նկարագրից որոշ առանձնահատկություններ:

[5] **Խորենացի**, Պատմութիւն հայոց մեծաց, Մատենագիրք հայոց, հ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1860:

ռանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնահայեաց», սակայն եթե այս բնութագիրը որևէ անձի համար կարելի է ընդունել, այն է՝ նա եղել է հենց այդպիսին, սակայն երբ մի ամբողջ տուն՝ նահանգ է այս անունով կորչվել, Մովսես Խորենացու ստուգաբանությունը, բնականաբար, ընդունելի չէ: «Տորքը հանդես է գալիս որպես Անգեղյա, որն ընկալվել է որպես «տգեղ», մինչդեռ այն նշանակում է, որ Տորքը Անգեղի տոհմից է»[1]:

Հայտնի է, որ նախապես Տորքն ու Անգեղը եղել են առանձին աստվածություններ[2]: Անգեղ անունը հիշատակվում է Հին Կտակարանում, որտեղ թարգմանիչները սեմական ստորերկրյա Ներգալ աստծու անունն են թարգմանել Անգեղ[3] (հմմտ. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների՝ Եբրայական եւ Յունական բնագիրներից թարգմանուած (Դ Թագաւորաց ԺԷ : 30)[4] և Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների՝ արևելահայերեն նոր թարգմանութիւն (Դ Թագաւորաց ԺԷ : 30))[5]: Ներգալ աստվածը հունարենում տառադարձվել է Εργέλ, իսկ հայերենում թարգմանվել՝ Անգեղ[6]:

Իր արարքներով Տորքը հիշեցնում է «Ոդիսականի» **կիկլոպ** Պոլիփեմոսին[7] և շումերական դիցաբանության Կուրին:

Որոշակիորեն առնչվում է քաոսին:

Նշենք, որ, ըստ հին աշխարհի մտածողության, ինչ-որ երկրի վրա է, նույնը նաև երկնքում է, հետևապես նահանգի Անգեղ անվանումը նաև համաստեղության անվանում է, ինչպես որ Խոյ, Վիշապ, Առյուծ ևն:

Մի կողմ թողնելով Տորքի հայոց որոտաբեր աստված լինելու հանգամանքը՝ նկատենք, որ առասպելը Տորք Անգեղին առնչում է արծիվների ու արծվազգիների (անգղ) հետ, որոնք նրա տոտեմական թռչուններն են, ապա գրի հետ՝ որով էլ կարող է ընդհանրանալ Տիրի հետ: Եթե կա-

---

[1] **Մ. Ն. Կոգան, Մ. Ա. Կոգան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Պ. Սելեցկի, թարգմ. Ս. Մ. Կյրկյաշարյանի,** Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 238:

[2] Նույն տեղում:

[3] **Մ. Ն. Կոգան, Մ. Ա. Կոգան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Պ. Սելեցկի, թարգմ. Ս. Մ. Կյրկյաշարյանի,** նշվ. աշխ., էջ 238:

[4] United Bible Socities-EPF, Armenian Bible 063-6M -1995:

[5] Հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերութեան, 1999:

[6] Հունարենում՝ **Τόργος** «անգղ»:

[7] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, էջ 39:

պենք նաև այդ թռչունների անվամբ հայտնի համաստեղությունների հետ ևս, կստացվի որ նրանք իբրև արծվազգի կապված են «ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ» կամ «ՔՆԱՐ», «ԱՐԾԻՎ» և «ԿԱՐԱՊ»՝ մեզանում «ՏՐԴԱՏԻ ԽԱՉ» կոչված համաստեղություններին:

Մինչ Տորք Անգեղի մասին մեր մատենագրական տեղեկությունների քննությունը շարունակելը անդրադառնանք մի բառի ևս, որը դիտում ենք՝ իբրև Տորք բառի օմոֆոն՝ արտասանական տարբերակ:

ՏՈՐԳ[1]- բնիկ հայերեն բառ «սարդի ոստայնի հիւսքը», ինչն ածանցվել է «ոստայնանկի փայտեայ կազմած, ոստայն» իմաստից[2] = բնիկ հայերեն բառ, հնխ. dorŭ «ծառ, փայտ» ձևից: Հղումը ՏԱՐԳԱԼ = գդալ բառին, ցույց է տալիս, որ նկատի է առնված այն նյութը՝ ծառ, փայտ, որից պատրաստված է առարկան:

Մեր մյուս պատմիչը, որ անդրադառնում է հայոց առասպելներին և **Անգեղ** տանը, Սեբեոսն է: Նա մասնավորաբար գրում է. «.... Ապա Փառնաւազ[3]:

Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. Եւ Բագարատ ծնաւ Բիւրատ. Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրենց ի **կողմանս արեւմտից.** այս ինքն է՝ **Անգեղ Տուն**. վասն զի կոչեցաւ **Բագարատ**[4] եւ **Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ա**զգ

---

[1] **Հր. Աճառյան**, նշվ., աշխ., հ. IV, էջ 422: (Տորգ = Թորգ + ոմ ? - Գ.Ս.)

[2] Բարբառներում նշանակել է «ծանր բաներ վերցնելու գլանաձև փայտ», «ոստայնանկի կազմած, դազգեահ», «քառակուսի փայտից կազմած, որի վրա խալիչա են գործում»:

[3] **Փառնաւազ** –բառացի «**փառավոր բազկով**»...(**Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, էջ 191):

[4] **ԲԱԳԱՐԱՏ** - հպրս. Bagadāta, որ բուն նշանակում է **«(Միհր)** աստծու տվածը կամ ստեղծածը»: ... Սրանից է ծագում **Բագրատունի** տոհմանունը ...(**Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. I, էջ 355): Այս անձնանունը, մեր կարծիքով, պետք է կապված լինի հնդեվրոպական «**աջ ձեռքի**» մասին՝ **իբրև ուժի ու իշխանության խորհրդանիշ**, եղած պատկերացումներին: «**Ձեռք**» հասկացությունը հնարավոր է արտահայտել հնդեվրոպական երեք արմատներով՝ 1. ***ĝ**[h]**es-r/ g**[h]**es-t**[h] **.** հայերենում՝ «**ձեռն (ք)**», խեթ.-ում՝ **keššar** «**ձեռք**» (կարծում ենք որ այս ձևից պետք է առաջացած լինի հռոմեական **կեսար**, **ցեզար** բառը), 2. լատիներեն «armus» «**արմունկ**» ձևին համապատասխան արմատով և այն անկյուն կարող է կազմել և 3. **b**[h]**ā ġ**[h]**u**՝ տարբեր լեզուներում կարող է նշանակել ձեռքի տարբեր հատվածներ. այսպես, հին հնդկերենում՝**bāhú** «**արմունկ**», ավեստ. Bāzau «**բազուկ**», հին իսլ. bógr «**ձեռք, ուս**», հին անգլ. bōg «**ուս**», հայերենում՝ ուսի և արմունկի միջև ընկած հատվածը՝ «**բազուկ**»: Ռուսերե-

բարբարոսացն **աստուած** կոչեցին»[1]:

Այստեղ միմյանց կապվեցին **Անգեղ (Անգղ), Բագրատ, Աստված և Միհր** անունները, որոնք առնչվում են ձեռքի տարբեր հատվածների և դրանցով ձևավորված անկյան՝ արմունկի հետ: Եթե տեղափոխենք այն աստեղնալից երկինք, կարող ենք պատկերացնել Ծիր կաթնի դելտան՝ անկյունը, և այդ հատվածում գտնվող աստղատները՝ «ԿԱՐԱՊ», «ՔՆԱՐ», «ԱՐԾԻՎ»:

Երկու առասպելներում կարևորենք նաև Անգեղ տան ա**րևմուտքի** հետ կապված լինելը, ինչպես նաև Զատկի տոնի հետ առնչությունը, որն առաջին հայացքից աննկատ է:

Անակ Պարթև անվան մեջ, մենք նկատում ենք Անգղ բառի ինչյունափոխված ձևը, մանավանդ որ այլ տեղերում ավելի ակնառու կերպով է այդ նկատվում: Իսկ պարթևը թեև այսօր հատկանիշ ցույց տվող բառ է՝ «հաղթահասակ, բարձրահասակ, հաղթանդամ» իմաստով, ինչպես որ փարթամ բառն է, սակայն ծագած պետք է լինի պարսկերեն parδama «**լավագույն**» բառից, որպես էության կրող միանգամայն առասպելական անուն է (մեզնից լավերը)[2]:

Առասպելում եթե հատուկ անունները վերածենք տոմարական հասկացությունների, ապա Տորք Անգեղը (=Բագրատունիները), ինչպես նաև կապվում է զատկական շրջանի՝ դրանով իսկ գարնանային օրահավասարի հետ, և քանի որ Զատիկը որոշելու կարևորագույն լուսատուն լիալուսինն է, ապա նաև լիալուսնի հետ, որի արտացոլումը կարող ենք տեսնել հայկական հանելուկներում, որտեղ անաքա ասելով հետագայում

նում այս արմատով է ձևավորվել «**աստված**» հասկացությունը՝ «**бог**»: Իսկ հայերենում այս արմատին համապատասխան «**բագ**»-ը թեև առանձին չպահպանվեց, սակայն պահպանվել է բառաբարդությունների մեջ՝ **բագին Բագարան, Բագրատունի**: Սակայն քրիստոնեական շրջանում հեթանոսական շրջանի այս «**բագ**»՝ «**աստված**», հավաքական իմաստ ունեցող բառը փոխարինվեց «**կուռ-ք**» անունով, որն էլ հենց նշանակում է ոչ թե կռածո, այլ «**ձեռք**», ինչպես որ հնդկական դիցաբանության մեջ Վիշնուի 10 ձեռքերն են, ոչ թե որպես մարմնանդամ, այլ այլաբանորեն՝ որպես անսահման **ուժի և իշխանության խորհրդանիշ և աստված**: Կուռ, կռել բառերի կուռ արմատը ևս պետք է դիտել ձեռքի աշխատանք: Մյուս կողմից էլ ձեռքերը կարող են տոմարական նշանակություն ունենալ և համապատասխանել ամիսներին:

[1] Պատմութիւն Սեբիոս եպիսկոպոսի, Անթիլիաս, 1990, էջ 79:

[2] **Ղ. Ալիշան**, Հին հաւատք հայոց:

հասկացել են լուսինը: Իսկ լուսինը, պատկերավոր ասած, կարող է համարվել արևմուտքի Լուսատուն, քանի որ ի տարբերություն Արևի ծագում է արևմուտքում: Սակայն երկնքի հյուսիսային կիսագնդի արևմուտքում են գտնվում «ՔՆԱՐ», «ԿԱՐԱՊ» և «ԱՐԾԻՎ» համաստեղությունները:

Սակայն վերոնշյալ համաստեղություններից մեկին է տրվել Անկաստեղ կամ Զանկբազմաստեղ անվանումը:

Ինչպես կտեսնենք ստորև, այլ ժողովուրդների առասպելաբանություններում ևս հայտնի է ԱՆԳՂ -ը՝ ԱՆԿԱ, ՍԻՄՈՒՐԳ-ՍԵՆՄՈՒՐՎ[1], ԳԱՐՈՒԴԱ անուններով, որոնք անչափ հետաքրքիր առնչություններ են դրսևորում աստեղնալից երկնքի հետ:

Մուսուլմանական[2] առասպելաբանությունը պահպանել է **ԱՆԿԱ**[3] (ʻankāʼ) անունով թռչնի մասին հավատալիքներ: **Անկան** թռչունի մի տեսակ է, որին ալլահը նախապես ստեղծել է կատարյալ, սակայն այն հետագայում դարձել է մարդկանց համար պատուհաս:

Ավանդությունը նրան կապում է Ղուրանում հիշատակվող **ասհաբ ար-բասս**[4] ժողովրդի հետ, որին փրկել է **անկա թռչուններին** ոչնչացրած **Խանզալ մարգարեն**[5]:

---

[1] Սիմուրգ (սինամրա, սենմուրվ ևն) թռչունը կոտրել է կենաց ծառի ճյուղը և սերմերը խառնել ջրերին: Այդ ծառի մականունը Յադ-բեշ է՝ «**չարահալած**»: Պերսեպոլիսի ապադանաների (տաճարների) պատկերաքանդակներում գլանակնիքների վրա առկա են նոճիների սրբազան ծառեր, արմավների պատկերներ: Սասանյան արծաթե գավաթների վրա կան ծովի վրա հառնող լեռան պատկերներ՝ **ծառերին կանգնած ձկներով,** արծաթե թասեր՝ սիմուրգ հավքերի պատկերներով: Տե՛ս Կենաց ծառ հոդվածը, Վիգեն Ղազարյան, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր. 2002, էջ 482-483:

[2] Թեև այս կրոնը ձևավորվել է մ.թ. 7-րդ դարի առաջին քառորդում, սակայն նրա հիմքում առավել վաղնջական պատկերացումներ են ընկած:

[3] ՄՀՄ, т. 1, ст. 83

[4] **Ասհաբ ար-բասս – գլխի տերեր** (թրգմն. Արաբերենից՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Մանուչարյանի): Գլխի հետ կապված հետաքրքիր առասպելներ է պահպանել պատմությունը: Զևսի գլխի հետ է կապված Աթենաս Պալլասը և կոչվում է Կառափնածին: Սլավոնական դիցաբանության մեջ **Միմիրը, քրիստոնեական առասպելաբանության մեջ՝ Հովհաննես Մկրտիչը:**

[5] **Խանզալ – Խոզ,** հավանաբար համապատասխանում է նույնանուն կենդանակերպին և մասնակիորեն կարող է առնչվել հայոց **Տիր** դիցանվանը, քանզի, մեր խորին համոզմամբ, հայոց Տրդատ թագավորի մեջ մարմնավորված են Տիր աստծու առանձնահատ-

Փաստորեն, ըստ մուսուլմանական առասպելաբանության, Խանզալ-Խոզ մարգարեն է ոչնչացրել անկա թռչուններին և փրկել «գլխի տեր ժողովրդին»:

Այսպիսով, ըստ Ղուրանի, Անկան առնչվում է «**գլխի տեր**»[1] ժողովրդի և «**ԽՈԶ**» (իբրև կենդանակերպ) հասկացությունների հետ:

«**ԽՈԶ**» (= «**ՁԿՆԵՐ**») կենդանակերպը հաջորդում է «**ՇՈՒՆ**»[2] (= «**Ջրիոս**») կենդանակերպին: Ըստ առասպելաբանաստեղծական մտածողության՝ ինչպես դիցաբանության մեջ է տեղի ունենում աստվածամարտություն (աստվածները միմյանց սպանելով է, որ իշխանությունը խլում են միմյանցից), նույնն ասես տեղի է ունենում բնության մեջ՝ հատկապես ժամանակի առումով, այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ ամիս կամ կենդանակերպ նախորդին հաղթելով է իշխանության գալիս, ինչը նույնն է, թե յուրաքանչյուր հաջորդ կենդանակերպ նախորդին սպանելով է, որ պիտի տեր դառնա կամ տանուտեր:

Ըստ այսմ՝ երբ առասպելում ասվում է, թե **Խանզալ** մարգարեն սպանեց **անկա** թռչունին և ազատեց «**գլխի տեր ժողովրդին**», պարզապես պետք է հասկանալ ամիսների հերթագայություն:

Առասպելների մի քանի տարբերակներում **Անկան** անհետացած թռչուն է, որն ամբողջովին չի վերացել և հանդիպում է հազվադեպ՝ ինչպես **փյունիկ** թռչունը:

Փյունիկ թռչունի հետ համեմատությունը վկայում է, որ **Անկայի** հետ են կապվում մեռնելու (ավարտվելու) և վերակենդանանալու (հարություն) գաղափարները[3], ինչն էլ հաստատում է, որ խոսքը ինչ որ պարբերաշրջանի մասին է, որն սկսում է **Անկային** համապատասխանող աստեղատնից՝ **Անկաստեղից**:

Ըստ անտիկ հեղինակների՝ Անկա թռչուններն ապրում են ա**ռաբական անապատում**:

կությունները. նրա կերպարանափոխվելը խոզի, ապա մարդկային կերպարանքը վերստանալը, տոմարական խորհրդաբանություն է:

[1] Սկանդինավյան դիցաբանության մեջ «գլխի տերը» Օդինն է, թվային համակարգում մեկը կամ առաջինը, իսկ գլուխը պատկանում է Միմիրին:

[2] Ըստ Ղուրանի՝ համապատասխանում է **Կիտմիր շանը** (քարանձավի մարդիկ- Ասխաբ ալ Կախֆ): Ավանդույթը Երկինքն առնչում է 10 կենդանիների հետ, որը 10-ամսյա տարվա պատկերացման վկայություն է (МНМ, Энциклопедия, т. 1, ст. 441):

[3] Մեռյալներին հարություն տալու կարողությամբ էին օժտված հենց **երկնային շները՝ արալեզները** (հիշենք Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելը):

Մուսուլմանական ավանդույթը **Անկային** նույնացրել է իրանական **սիմուրգների**, իսկ հնդկականը՝ **Գարուդայի**[1] (Հարութ – հարություն-Զատկի տոն ?– Գ. Ս.) հետ:

Սիմուրգ[2] (Ֆարսի) իրանական առասպելաբանության մեջ մարգարե է կամ **բարձր ազդարարող թռչուն**[3]: Անվանումը ծագում է ա**ռծվակերպ մȣrȣ̄ȣ̄ saeno**[4] «**կարապ**» թռչունի ավեստական անունից: Երբեմն հանդես է գալիս իբրև **ճակատագրի գործիք**[5]: Ունի երկակի բնույթ՝ բարի և չար (դիվական)[6]: Կապված է ա**նապատի**[7] հետ: Հակամարտություն ունի **սֆինքսակերպ**[8] գոյության հետ:

---

[1] Հին հնդկական առասպելներում **գարուդան** գիշակեր է, թռչունների արքա (**անգղ կամ արծիվ = կարապ** - Գ. Ս.) և Վիշնուի վահանան (հեծկանը): Սա նշանակում է, որ գարուդան կարող է նույնանալ Վիշնուին՝ հին հնդկական երեք գլխավոր աստվածություններից մեկին: Փառաբանվում են Վիշնուի երեք քայլերը, որոնցից կարևորը երրորդն է, այն է՝ թզուկի կերպարանքով նա դայթների Բալի (= Բահալ, Բել = շուն) արքայից խլել է իշխանությունը: Տարբեր ժամանակներում ստեղծված առասպելներում Վիշնուն կապված է նաև համաշխարհային պարբերաշրջանների հետ, որոնցից հետո ներառում է իր մեջ ողջ տիեզերքը և քուն է մտնում՝ պառկելով Շեշա օձի վրա, որ լողում է համաշխարհային օվկիանի վրա (ՄՀՄ, т. 1, ст. 266):

[2] Մանրամասն տե՛ս ՄՀՄ, т. 2, ст. 436-437:

[3] «**Անապատում կանչողի ձայնն է**», ասվում է Աստվածաշնչում **Հովհաննես Մկրտչի մասին:**

[4] Ավեստայի **մȣrȣ̄ȣ̄ saeno**-համապատասխանում է **սենմուրվ** ֆանտաստիկ գոյությունը՝ **թևավոր շուն**, որի մարմինը ծածկված է **ձկան թեփուկներով** (Բուդապեշտի արևելասիական արվեստի թանգարանում պահպանվել է մի որմնանկար, որտեղ երեք առասպելական գոյություններ են պատկերված՝ **գարուդան** = **սիմուրգ**՝ **ձկան** թեփուկներով, թռչունի վերամբարձ թևերով և **շնագլուխ** (**անգղագլուխ կամ արծվագլուխ – Գ. Ս.**) և մարդակերպ, սակայն **կարապ** հիշեցնող մեկը՝ կենաց ծառի մոտ, իսկ երրորդը ևս մարդակերպ է և նման թռչնի՝ փակված թևերով (նման քրիստոնեական հրեշտակներին՝ սերովբե և քերովբե) (ՄՀՄ, т. 1, ст. 151): Դրանք «**ՔՆԱՐ**», «**ԿԱՐԱՊ**» և «**ԱՐԾԻՎ**» համաստեղությունների առասպելաբանաստեղծական մտածողության արտահայտություններն են): Քրիստոնեական հավատքի հրեշտակները ևս հանդես են գալիս բացված կամ փակված թևերով:

[5] Հայոց դիցարանում ճակատագրի հետ է կապվում **Տիրը:**

[6] Այլաբանորեն այն առնչվում է ինչպես լույսի, այնպես էլ խավարի հետ:

[7] **Ձայն բարբառոյ յանապատի՝ Հովհաննես Մկրտիչ (Կարապետ)**:

[8] Մեր պատկերացումներով այն «**ԱՌՅՈՒԾ**» և իգական աստվածության՝ Մայր աստվածուհի, գուցե և Մեծ Մորը համապատասխանող համաստեղությունների սիմբիոզն է:

Նրա մասին պատկերացումներն իրենց մեջ պարունակում են հին եվրասիական պատկերացումների վերհուշը ա**րծվի** մասին, որ երկնքից կամ սրբազան սարից երկիր է բերել **կյանքի ծառի ընձյուղը՝ շիվը**: Սա նշանակում է, որ պտղաբերության, բեղմնավորության կամ կյանքի վերածննդի իմաստ ունի:

Հին հնդկական ավանդույթում Ա**ՆԿ**-ին համապատասխանում է **Գարուդան: Այն** գիշակեր[1], գեշը՝ դին՝ (փոխաբերաբար՝ խավարը) «խժռող» թռչուն է, թռչունների արքա[2], որի էպիտետն է **Տարկշյա**[3]: Վերջինս հին հնդկական եռյակ աստվածներից մեկի՝ **Վիշնուի**[4] հեծկան կենդանին է՝ ձին կամ թռչունը (հմմտ. Արգիշտի արքայի ձիու հետ, որ կոչվել է Արծիբի –Գ. Ս.): Եվ ըստ այդմ՝ կարող է ընդհանրանալ հենց Վիշնուի հետ: Երբ ծնվում է **գարուդան**, աստվածները, նրա մարմնից ճառագող շողարձակումից կուրացած, շփոթում են նրան **Ագնիի**[5] հետ, փառաբանում իբրև **Արևի**:

Ըստ հնդկական դիցաբանության՝ սա արեգակի նման հզոր լուսա-

Աթենասի վահանին պատկերված են թևավոր առյուծներ (МНМ, т. 1, Москва, 1987, с. 127):

[1] Իբրև գիշակեր կարող է համապատասխանել **անգղին**:

[2] Իբրև թռչունների արքա կարող է նույնանալ ա**րծվի** հետ:

[3] **Տարքշյան** արևի աստծու կենդանին է և զարմանալիորեն նմանահունչ է հայոց առասպելական **Տորքի** (**Անգեղ**) անվանը: Իսկ մեր ենթադրությամբ՝ **Տորքը** «**ԿԱՐԱՊ**» կամ «**ՔՆԱՐ**» համաստեղության անձնավորումն է, որի մասին պատմող առասպելը հուշում է, որ նա ունեցել է հնդեվրոպական որոտաբերին (**Պերուն, Պերկունաս, Թոր, Դոնար, Թեշուբ** ևն) բնորոշ հատկանիշներ, իսկ Ղ. Աղայանի գրական մշակումը, թեև գեղարվեստորեն, սակայն առավել շատ բան է ասում նրա առասպելական կերպարի մասին: Հատկապես, պետք է նկատի ունենանք, որ **Անգեղը** ոչ թե ածականական մակդիր է և նշանակում է «**տգեղ**», այլ գոյականական, և այս դեպքում նշանակում է Ա**նգղ Տորք**, ինչպես օր., **Գայլ Վահան, Աղբյուր Սերոբ ևն:** (տե՛ս **Ղ. Աղայան**, «Տորք Անգեղ» պոեմը, որտեղ հեղինակը հաղորդում է նաև Տորքի սիրած աղջկա անունը՝ Հայկանուշ: Թվում է, թե պատահականորեն է այն առնչվում Հայկի անվանը, սակայն կարծում ենք, որ այս անունը շատ բան է ասում նաև Տորք Անգեղի մասին, առաջին հերթին այն, որ ասես նա նույնանում է Հայկի հետ և ձևավորում առաջին աստվածային զույգը՝ Հայկ և Հայկանուշ):

[4] Տե՛ս МНМ, Энциклопедия, т. 1, ст. 239:

[5] Կրակի աստված: Ագնիի անվան արմատը, մեր կարծիքով, նույն Անգ արմատն է ն>գ դրափոխությամբ առաջացած:

տու է եղել:

Գարուդան աստվածներից հափշտակում է **ամրիտան**[1]՝ անմահական խմիչքը[2], և ճանապարհին հանդիպում Վիշնուին: Վիշնուն պարգև է խոստանում նրան, իսկ գարուդան պահանջում է լինել նրանից ավելի բարձր: Վիշնուն նրա պատկերը տեղադրում է իր **դրոշին** և փոխարենը խնդրում դառնալ իր հեծկան կենդանին: Այս պատումից կարելի է ենթադրել, որ մենք **գարուդային** կարող ենք հանդիպել **և՛ դրոշի տեսքով**, **և՛ Վիշնուի,** և՛ **իր սեփական**: Սա էլ յուրօրինակ եռամիասնության խորհուրդ ունի և խոսում է իշխանության մասին՝ «Վերին աշխարհում»՝ դրոշ, «Միջին աշխարհում»՝ Վիշնու, «Ստորին աշխարհում»՝ **Տարքշյա**:

Սրանք երեքն էլ առնչվում են անմահական ջրին, ինչն այլաբանորեն հարություն առնելու իմաստ ունի:

Բուդդայական առասպելաբանությունը **գարուդային օձամարտ** հսկա **թռչուն** է դիտում, որի թևերի թափահարումից բուք, փոթորիկ է առաջանում[3]: Նշանակում է, որ բուդդայական առասպելաբանությունը ևս նրան օժտել է որոտաբերի հատկանիշներով, ինչով դարձյալ հարաբերվում է հայոց դիցաբանության **Տորք Անգեղին:**

Մոնղոլական տարբերակում **գարուդան** կոչվում է «**վիշապին խըժռող**»: Նա **պատնեշում**[4] է Սիտային[5] հափշտակող դևերի ճանապարհը[6]:

Գարուդայի մասին մոնղոլների պատկերացումը հետաքրքիր է նրանով, որ առնչվում է երկրագործական տարվա **ցանքսի** ժամանակաշրջ-

---

[1] Ամրիտայի հափշտակման մոտիվը չափազանց արխայիկ է և ծագումնաբանորեն կապված է ինչպես սոմայի հափշտակման առասպելին, այնպես էլ սկանդինավյան՝ Օդինի՝ հսկաներից սրբազան մեղրի ձեռք բերմանը, որոնց բոլորի հիմքն էլ հնդեվրոպական սրբազան խմիչքի հափշտակման մասին պատմող առասպելն է (ՄԻՄ, т. 1, ст. 266-267):

[2] Հեքիաթների անմահական ջուրը, որ ոչ միայն բուժում, այլև վերակենդանացնում է:

[3] Համապատասխանում է հնդեվրոպական որոտաբերին, ինչպես և Ս. Սարգսին:

[4] Փաստորեն նա **պարիսպ** է կամ **դուռ (= շուն = կողպեք)**, և ինչպես հետագա շարադրանքում կտեսնենք, առասպելական մտածողությանը բնորոշ դերակատարություն ունի:

[5] Սիտա բառացի նշանակում է «**ակոս**», **ցանքսի** աստվածուհի, որի մասին առասպելները սյուժետային ընդհանրություններ ունեն հուն. Պերսեփոնեի մասին պատմող առասպելների հետ: Նրա հետ կապված առասպելներում նկատելի են օրացույցային կամ երկրագործական առասպելաբանության հետքեր (ՄԻՄ, т. 2, ст. 439):

[6] ՄԻՄ, т. 1, ст. 267.

ջանի հետ, որով էլ հուշում է գարնան սկզբի կամ նրան նախորդող (Սիտային հափշտակող դևեր = հայոց դիցաբանության վիշապներ = հողմնային տարերք)՝ ժամանակի մասին: Նշանակում է, որ **գարուդա** անվանվող առասպելական **անկա** թռչունը սահմանային դիրք է գրավում գարուն և ձմեռ կամ գարուն-ամառ եղանակների միջև՝ կատարելով **պատնեշի՝ պարսպի** կամ **դռան, այն է՝** կողպեքի, պահապան շան դեր:

Հստակորեն կապված են ցանքսի ժամանակի հետ, որն իրապես կարելի է դիտել ամենայն բեղմնավորության ժամանակաշրջան:

Գիրք վաստակոցում ցանքսի հետ են առնչել միևնույն օրը ծագող **Վեգա** ՝ «**ՔՆԱՐ**» համաստեղության մեծագույն և **Ռիգել**՝ «**ՕՐԻՈՆ**» համաստեղության աջ ուսը խորհրդանշող աստղերը:

Եթե որևէ բան ցանվի նրանց ծագումից առաջ, բերքը քիչ կլինի, պետք է ցանքս կատարել միայն նրա ծագումից հետո: **Ռիգել**՝ Ռիղլ ալ Ղաբար աստղի հետ միևնույն օրն է ծագում նաև «**ՔՆԱՐ**» համաստեղության α **ՎԵԳԱ** աստղը, որին արաբներն անվանել են «**Նիսր իլ վագի**», որ է «**ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ**»[1]:

Հունահռոմեական ավանդույթում **Անգղը** համարվել է **Արեսի (հռ. Մարսի**) և Հերայի պաշտամունքային թռչունը:

Մեր կարծիքով, այս թռչունի անունն ի հայտ է գալիս Ա**նք(խ)իս** առասպելական անվան մեջ, հատկապես որ այստեղ ևս ուղղակիորեն բեղմնավորման թեման է արծարծվում:

Անք(խ)իս[2] **ΑνΧ** լատ. **Anchises** – հունական և լատին առասպելաբանության մեջ նա Էնեասի հայրն է՝ գեղեցիկ և ուժեղ: **Նա հովիվ է**: **Աֆրոդիտեն** հմայվելով **հոտն արածեցնող**[3] **Անքիսով**՝ նրան է ներկայանում՝ իբրև փռյուգիական թագավոր Օ**ստրեյի** դուստր և մերձենում: Հետո հայտնում է նրան, որ կծնի նրանից փառահեղ հերոս **Էնեասին**[4]: Սակայն կայն Աֆրոդիտեն արգելում է Անքիսին բարձրաձայնել իրենց գաղտնի ամուսնության մասին: Անքիսը երդումով խոստանում է լռել: Սակայն խնջույքի ժամանակ հարբելով՝ դրժում է իր ուխտը: **Զևսն** իմանալով այդ մասին՝ կայծակներով խոցում է նրան: Ամենահին ավանդույթների հա-

---

[1] Գիրք վաստակոց, Դուռն Լ, էջ 26:

[2] Мыфи народов мира, т. 1. ст. 90.

[3] Առասպելաբանության մեջ հովիվը մեր ընկալումով համապատասխանում է տոմարագիտության մեջ առկա «Տանուտեր» հասկացությանը:

[4] Տրոյական պատերազմի մասնակից՝ տրոյացիների կողմից:

մածայն՝ **խոցում է մահացու**, իսկ ուշ շրջանի պատումներում Անքիսը ոչ թե մահանում, այլ **ուժասպառ** է լինում կամ **կուրանում**: **Տրոյայի**[1] անկման գիշերը Էնեասը իր **ուսերին դրած** դուրս է բերում նրան **այրվող** քաղաքից, որը մահանում է ճանապարհին և թաղվում կա՛մ **Արկադիայի**[2] **Անքիս լեռան**[3] մոտ, կա՛մ **Իտալիայում**[4], կա՛մ **Սիցիլիայում**:[5]

Անքիսի պատվին Էնեասը կազմակերպում է թաղման կամ **տրոյական խաղեր**[6], որոնք գոյություն ունեին դեռևս մինչև բյուզանդական կայսրության առաջանալը:

Այստեղ տեղին է խոսել երեք առասպելաբանական հասկացությունների մասին՝ **պարիսպ, դուռ** և **աշտարակ**: Սրանք համապատասխանում են «**ՔՆԱՐ**»[7]**,** «**ԿԱՐԱՊ**» **և** «**ԱՐԾԻՎ**» համաստեղություններին: Այս երեք համաստեղությունները միշտ հանդես են գալիս միասնաբար, և հին քաղաքակրթություններից մեզ հասած մշակութային արժեքներում հանդիպում ենք նրանց և՛ մարդակերպ, և՛ կենդանակերպ, ինչպես և այլ խորհրդապատկերների: Օր., եգիպտական գաղափարագրերում այն-

---

[1] Տրոյա՝ եռյակ՝ առասպելաբանաստեղծական մտածողությամբ՝ պարիսպ, դուռ, աշտարակ:

[2] **Արկադիա** – առասպելական երկիր, այնպես, ինչպես Աստվածաշնչում «ավետյաց երկիրը» կամ «երկնային Երուսաղեմը»:

[3] «ՔՆԱՐ» համաստեղությունը, որն, ասես թե, «ԱՆԳՂ» -«ԿԱՐԱՊ» համաստեղության ուսերին գտնվի:

[4] Իտալիա – Իտալիայի աշխարհագրական տեսքը հիշեցնում է ասես Ծիր կաթնի դելտան, որտեղ գտնվում է «ԿԱՐԱՊ» համաստեղությունը:

[5] Այս առասպելը բովանդակային ընդհանրություն ունի հայոց «**Արա Գեղեցիկ և Շամիրամ**» առասպելի հետ: Եվ, ըստ այդմ, նույնանում են **Աֆրոդիտեն ու Շամիրամը և Անքիսն ու Արա Գեղեցիկը**:

[6] Խաղերը պետք է հասկանալ ոչ միայն մրցություններ, այլև իբրև թաղման ծիսական արարողությանը ուղեկցող յուրահատուկ պարեր ու երգեր, այսինքն՝ խաղ (խաղիկ)՝ պարերգ, որոնց մնացուկները մինչ օրս դեռևս պահպանվում են մեզանում:

[7] Այս համաստեղությունն այժմ կոչվում է «**ՔՆԱՐ**», որը նախկին **«ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ»** համաստեղության մի մասն է միայն: Նույնիսկ անվան փոփոխությունը, ցույց է տալիս, որ այս աստեղատունը ինչ-ինչ պատճառներով փոփոխություն է կրել կամ գուցե երկնային որևէ մարմնի հետ բախման հետևանքով, որ առասպելականացվել է՝ Զևսի կայծակներից խոցվելու պատկերով, կամ այնպես է փոխվել նրա դիրքը, որ կարևորվել է միայն ժամանակակից «**ՔՆԱՐ**» կոչվող հատվածը միայն: Նշենք, որ այս համաստեղության առաջին մեծության աստղը Վեգան է, որը 13 հազար տարի եղել է հյուսիսային Բևեռային աստղը:

քան շատ հանդիպող **ԱՆԽ խաչը** կամ մեզանում հայտնի **Տրդատի խաչը**, որի մասին գիտենք, սակայն նրա պատկերը չի ներկայացվում: Եգիպտական պատկերագրության մեջ այս խաչը, որը բանալի է հիշեցնում, երբեք առանձին աստվածության ձեռքում չի լինում, մշտապես երեք աստվածների, որոնցից մեկի գլխին հստակորեն պատկերված է կրիա, ինչից կարելի է հետևեցնել, որ այս երեքը կա՛մ մշտապես միասնական են գործել, կա՛մ ունեցել են միևնույն դերակատարությունը:

Մեզանում, հավանաբար, այս բանալի աստղի՝ Անխի կամ Տրդատի խաչի մասին եղած հավատալիքներն ու պատկերացումներն են պահպանվել Համբարձման տոնի վիճակի երգերում՝ **Բալնիս ե**րկնուց ընցավ, Երկընուց դռներ բացավ, Ձեր սեղան ոսկի խնձորով, Ձեր բակ արևու շողով լցվավ[1]:

Թեև մենք այստեղ այն կապում ենք Տրդատի խաչի հետ, սակայն այն կարող է վերաբերել աստղագիտության մեջ հայտնի երեք՝ «ՔՆԱՐ», «ԿԱՐԱՊ» և «ԱՐԾԻՎ» համաստեղություններին էլ, քանի որ այս համաստեղությունների գլխավոր աստղերով՝ Վեգա-Դենեբ-Ալ Տաիր-ով, ձևավորված է Ամառային եռանկյունին:

Հայկական լեռնաշխարհը, Առաջավոր Ասիայում գրավելով հարմարավետ բարձր դիրք և ունենալով լեռնային տեղանք, ունեցել է աստեղնալից երկինքը դիտելու և ուսումնասիրելու լավագույն հնարավորությունը: Եվ միանգամայն հասկանալի է, թե այս լեռնաշխարհի բնակիչներն ինչու ունեին այսքան զարգացած տիեզերական պատկերացումներ: Եվ այդ պատկերացումների շրջանակում էին գտնվում ոչ միայն արևն ու լուսինը, այլև մոլորակներն ու անշարժ աստեղատները:

Հնագիտական, բանահյուսական, ազգագրական հարուստ նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու մեր նախնիների՝ լուսատուների ու աստեղնալից երկնքի մասին ունեցած պատկերացումների մասին:

Դեռևս էնեոլիթի դարաշրջանից արդեն մարդը ոչ միայն ուսումնասիրել, այլև փորձ է կատարել տարբեր միջոցներով ու պատկերներով ներկայացնել այդ ամենը, որը շարունակել է ուշ բրոնզեդարյան դարաշրջանում (մ. թ. ա. II հազարամյակ), ապա նաև հետագայում: Լուսատուները, աստեղատներն ու մոլորակները պատկերվել են կենդանակերպ (զոոմորֆկամ անիմիստական), երկրաչափական պատկերների տեսքով և, ի

---

[1] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 58:

վերջո, մարդակերպ (անտրոպոմորֆ) ու նրանց գաղափարագրերով:

Լուսատուների, աստեղատների ու մոլորակների կենդանակերպ պատկերներում հանդիպում ենք ընտանի կենդանիների՝ այծի, ցուլի, խոյի, շան, վայրի կենդանիների՝ եղջերվի, եղնիկի, գայլի, առյուծի, սողունների՝ օձի, ինչպես և թռչունների՝ արծվի, արագիլի, անգղի, կարապի և այլն, իսկ մարդակերպերում՝ «որսորդների», «սայլորդի» և պարզապես մարդկանց :

Դրանք պատկերվել են ժայռերի վրա, հավատքապաշտամունքային անոթների, բրոնզե գոտիների, ոսկե թիթեղների վրա:

Տիեզերական պատկերացումներն իրենց դրսևորումներն են գտել բանահյուսական ստեղծագործություններում՝ առասպել, հանելուկ, ասացվածք ևն[1]:

Բերենք հանելուկի մի օրինակ՝ Մաղըմ **վեգ**, Մեջն ա**նաքա**[2]:

Պատասխանը դրել են լուսին:

Այս հանելուկն օգտագործել է Ռ. Իսրայելյանը, ով գրում է. «…. Անիմիստական գաղափարաբանության սկզբունքով **վեգերը** փոխարինում են անասուններին-աստղերին, **անաքան**՝ լուսնին, իսկ մաղի միջոցով ներկայացված է երկինքը»[3]:

Հեղինակն առաջին զուգահեռը ճիշտ է նկատել, որ վեգը աստղի նշանակ է, սակայն նշենք, որ հատկապես վեգի հիշատակումը պետք է հուշեր «ՔՆԱՐ» համաստեղության մասին, իսկ **անաքան** լուսինն է՝ լիովին անհամապատասխան զույգ է: **Անաքան**, «Կարապ» համաստեղությունն է, որի ամենապայծառ աստղի անվանումն արաբերենով Ալտաիր է, գուցե և նրանում պահպանված է գրի, գրչության, արվեստների հովանավոր, երազների մեկնիչ, ճակատագրի հայոց Տիր աստծու անվանումը: Մեր կարծիքով անաքան **անկա ա**ռասպելական թռչունն է՝ անգղը, որին անտրոպոմորֆ կոդում համապատասխանում է Տորքը, հունական դիցաբանության **Անքիսը**, հայոցով **Անակի որդի Գրիգոր Լուսավորիչը**[4], որոնց աստեղնալից երկքում համապատասխանում է «ԿԱՐԱՊ» համաս-

---

[1] **Հ. Ռ. Իսրայելյան**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973:

[2] **Ս. Հարությունյան**, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 10:

[3] **Հ. Ռ. Իսրայելյան**, նշվ. աշխ. էջ 76:

[4] Արագածի գլխին առանց շղթա երկնքից կախված Լուսավորչի կանթեղը հենց այդ աստղն էլ պետք է խորհրդաբանի:

տեղությունը, ինչի հարևանությամբ է գտնվում «**ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ**»՝ «**ՔՆԱՐ**» համաստեղությունը, որի խոշորագույն աստղը **Վեգան** է:

Այսպիսով հանելուկի պատասխանն է՝ երկինք և մոռացության մատնված «ԿԱՐԱՊ» և «**ՀԱՐՁԱԿՎՈՂ ԱՐԾԻՎ**»՝ «**ՔՆԱՐ**» համաստեղությունները, որոնք պարզապես փոխարինվել են Լուսնով[1]:

Տանք նաև «**ՔՆԱՐ**»[2]- Lyra, Lyr համաստեղության ժամանակակից բնութագրիչները: «**ՔՆԱՐ**» համաստեղությունը երկնքում փոքր տիրույթ է զբաղեցնում: Նրանում է տեղակայված երկնքի ամենապայծառ աստղերից մեկը՝ **Վեգան:** Համաստեղության անվանումը գալիս է արաբական «**ալ-նասր ալ վակ**» բառից, ինչ թարգմանաբար նշանակում է «**Հարձակվող արծիվ (անգղ)**»[3]**:** Ամռան ու աշնան ամիսներին գտնվում է զենիթում: Դեպի այդ աստղն է ուղղված **Վիշապի գլուխը**, որ «փորձում է նրան կուլ տալ»: Իրականում «**ՔՆԱՐ**»**ը** հարձակվող արծվի կրծքին տեղակայված 4 աստղից բաղկացած աստղախումբ է, որի աստղերը պտտվում են միմյանց շուրջ: «Բոլոր 4 աստղերն էլ սպիտակ գույնի են և, իրար շուրջ պտտվելով, կարծես մեզ են ներկայացնում աստղային պարազույգերի ժամանակակից **պարերի** իրենց **արվեստը**»[4]: Նրանց միջև է գտնվում «**ՕՂԱԿ**» **մոլորակաձև միգամածությունը**[5]**:**

Վեգան[6] 51 անգամ ավելի էներգիա է առաքում երկիր, քան արեգակը:

Նրա վրա դիտվել է նաև «աստղային անձրև»:

Հայերը «ՔՆԱՐ» համաստեղությունն անվանել են նաև «**ՎԱՀԱՆ**»:

Վեգան գտնվում է մեզնից 26,5 լուսատարի հեռավորության վրա:

Վեգայի մոտ է գտնվում ասուպային հոսքի ռադիանտը (19-24 ապրիլի):

---

[1] Հնարավոր է, որ կապը լուսնի հետ առաջացել է գունային կամ մետաղական կոդով՝ համապատասխանելով **անագ** բառին (Մանրամասն տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. Ի, էջ 177):

[2] **Սերգեյ Ներսիսյան**, Աստեղնալից երկինք, «Լիլիթ և Էդիտ» սպը, Արմավիր, էջ 45-46:

[3] **Գիշակեր** թռչունների ընտանիք, մինչև **3 մետր** երկարությամբ, անփետուր, **լերկ գլխով**, բնակվում է բարձր լեռներում.... Սրատես և **որկրամոլ**, ... Հին ժամանակներում նվիրված է եղել **Արէսին ու Հերային**: Ըստ առասպելի՝ **անգղը** քցցում էր շղթայակապ Պրոմեթևսի կուրծքը (**Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. Ի, 1944, էջ 101):

[4] **Սերգեյ Ներսիսյան**, Աստեղնալից երկինք, «Լիլիթ և Էդիտ» սպը, Արմավիր, էջ 44:

[5] Հմմտ, **Անգղ՝ կոճակի օղակ, կոճակամայր**:

[6] **Վեգ** – հուն. անվ. **Αστραγαλος**, լատ. **Talus**, կճղակաբաշխ կենդանիների ծնկան յոդի ոսկորը, որով երեխաները խաղում են կոռ, կոճի, ճան:

Առավելագույն հոսքը՝ **ապրիլի 22-ին**:

Համաստեղության հարձակվող արծիվ կոչվելը առնչվում է անկման գաղափարի հետ: Արծիվը երկնային բարձունքներից սրընթաց անկումով է հարձակվում իր զոհի վրա:

«ՔՆԱՐ» համաստեղության անվանումը, ըստ հունական դիցաբանության, առաջացել է Հերմեսի՝ կրիայի պատյանից պատրաստած յոթնալար քնարի անվանումից, որը Ապոլոնը լարելով նվիրում է **Օրփեոսին**[1]**: Օրփեոսի** քնարի նվագը **դյութում, քնեցնում** էր կենդանի ու անկենդան ամեն ինչ, շարժում ժայռերը: Նույնիսկ դժոխքի տիրակալ **ԱԻԴ**ին (**Հադեսին**): Այսինքն՝ կապված է նախ՝ **քնեցնելու**, **դյութելու** իրողությանը, ապա՝ **արվեստների** հետ: Այն սերտորեն կապված է **քուն և երազ** հասկացություններին: Հայերենում «քուն»- բառի հոմանիշներն են **մրափ՝ մրափել, մռփել (= Մորփեոս = Օրփեոս**):

Օրփեոսը գլխավոր աստված է համարել Արեգակը: Նա արթնացել է լուսաբացից առաջ՝ առաջինը տեսնելու Արեգակը[2]: Այսինքն այն առնչվում է առավոտյան ժամերից առաջինին՝ այգին:

Հայոց դիցաբանության մեջ արվեստների հովանավորը է եղել **Տիրը**, որը միաժամանակ մեկնել է երազները: Կարելի է հետևեցնել, որ Տիրը համապատասխանել է լայն առումով «ԿԱՐԱՊ»-**ԱՆԳՂ,** «ՔՆԱՐ», համաստեղություններին: Համաստեղության «ԿՐԻԱ» անվանումը պետք է առնչի նրան այդ անվան էությանը:

ԿՐԻԱ[3] – կրիայի հնդեվրոպական անվանումները հարաբերվում են միմյանց հետ առանձին բարբառային արեալներով, ինչն անհնար է դարձնում նախընտրել դրանցից որևէ մեկը՝ իբրև համահնդեվրոպական նախաձև: Այսպես, հույների մոտ այն՝ χέλυς- «կրիա», «քնար», սերբ. Žëlvo, սլովակ. Želva, չեխ. Želva - «կրիա», ռուս. желвак ենթադրում են g[h]el-u նախաձևը, որը ոչ շատ վաղուց (ըստ բառարանների՝ ամենավաղ

---

[1] Օրփեոսը Ապոլոնի որդին էր:

[2] Հմմտ. տեառնընդառաջի առավոտյան նորապսակների՝ լուսաբացից առաջ երդիկներ բարձրանալն ու արեգակը դիմավորելու երգը՝ Այ էգ բարև.....:

[3] **ԿՐԱՅ** – (գրուած նաև կրիայ, կիրիայ, կիրայ Վրդ. առկ., 28) = ծագում է կուր «**մակոյկ, նաւակ**» (այսինքն՝ «**տաշտ**») արմատից: Լաւագոյն գրչութիւնը կրեայ, իբր «**տաշտեայ, տաշտէ**»: Կարկուրայ, կարկուրայ «**նաւակ**», կեռեայ, կեռայ, կիւռայ «**կայմ**»: Հետաքրքրություն են ներկայացնում բռբ. մեկ-երկու ձևեր Ասլ. **Բէօչօվդիրյա**՛, այն է՝ **պոչով տիրյա**, որով **կրեայ** բառը ստացած լինի **տիրյա** ձևը, Զթ. ստացել է **գօյրո** ձևը՝ «**դռան մի տեսակ փականք**» նշանակությամբ (**Հր. Աճառյան**, Արմ. բառարան, հ. 2, էջ 679-680):

գործածությունը 1686 թ.) տաբուացվում է և նրա փոխարեն գործածվում черепаха[1]-ն՝ череп - «կառափ, գանգ» արմատից[2]: Հետաքրքիրն այն է, որ **կառափի** արտասանական տարբերակ կարելի է համարել կարապը, իսկ գանգից այլաբանորեն հնարավոր է ստանալ գոնգ, ապա զանգ: Մյուս կողմից էլ՝ այն առնչվում է կրիայի պատյանի ստորին հատվածի հետ, որ կոչվում է կարապաս:

Քիչ հետաքրքիր չէ նաև ԱՆԿ բառարմատի երկրորդ տարբերակը՝ **ԶԱՆԿը** կամ **ԶԱՆԳը**[3]:

Եթէ մտածենք, որ զ-ն հայցական հոլովի նախդիրն է, ապա այն միայն սաստկական նշանակություն կարող է հաղորդել բառին, իսկ եթե արմատական է, ապա այն առնչում է զանգի (զանկակ = զանգակ) հետ, որը քրիստոնեական խորհրդաբանության մեջ առնչվում է Մարիամ Աստվածածնի հետ: Եկեղեցական տոնական տարվա կտրվածքով առաջին տոնը, որ նվիրված է Մարիամին, Աւետումն է, որ հաշվում է անշարժ ամիս-ամսաթվով՝ ապրիլ ամսի 6 (7)-ին: Քանի որ Քրիստոսի Հարության տոնը 35-օրյա շարժականություն ուներ և կատարվում էր մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը եղած որևէ կիրակի օր, ապա 532 ամյա զատկացուցակի բազմաթիվ տարիների Աւետման տոնը համընկնում է Քրիստոսի Հարության՝ Զատկի տոնի հետ, որը վաղ շրջանում կատարվել է ութօրեքով, և Զատկի կիրակիին հաջորդող կիրակին կոչվել է Զատկին Զատիկ, Կրկնազատիկ, Երկրորդ Զատիկ, որը Հովհան Օձնեցին անվանում է Նոր կիրակի: Մարիամ Աստվածածնի Ավետման ու Քրիստոսի Հարության տոնի զուգադիպության տարիներին Զատկի կիրակիից հաշված 8-րդ օրը՝ Նոր կիրակին, մշտապես կլինի ապրիլի 14-ին: Հովհան Օձնեցին իր «Ի խորհուրդ նոր կիւրակէին» ճառում[4] նկատի ունի, մեր կարծիքով, հենց ապրիլի 14-ին համընկնող Նոր կիրակին: «....իսկ քարեղէն բնակիտքն. Նշնակ կարծեմ կուսին վասն անարատութեան և պար-

---

[1] Հնարավոր է նաև, որ черепаха բառում н-ի անկում տեղի ունեցած լինի և բառը նախապես եղած լինի череп анха: Ռուսերեն **череп** բառն ունի հնացած իմաստ, որ նշանակում է «**ձյան տակ գոյացած**» (գուցե կապված աշնանացան հացահատիկի հետ, որ ձմռանը մնում է ձյան տակ կամ խաղողի որթի):

[2] **Т. В. Гамкрелидзе**, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, ст. 533:

[3] Հմմտ, Զանգի-Զրանգիի հետ (Տե՛ս Զանգի-Զրանգի, Ղ. Աղայան, Հեքիաթներ, Եր., 1960, էջ 162-170):

[4] ՄՄ ձեռ. թիվ 2819, էջ 270 ա-274 ա:

կեշտութեան: և երկու, զի հոգւով և մարմնով էր սուրբ: և արժանաւոր էր երանուհի կոյսն: այսոքիկ ի ձեռն Մովսէսի դրոշմեցան խորհուրդք (կ.լ 5) եւ թէ զի՞նչ են հանգամանք (կ.լ 5) գալստեան նորա: **Տայ և մեզ նշանակ դաւիթ**[1]: իջցէ որպէս անձրև ի վերայ գ(զ)եղման, որպէս ցաւղ ցաւղեալ յերկիր: և վասն է՞ր գայ. Զի փրկեսցէ ըզաղքատն և զտնանգն ի ձեռաց հըզաւրի, յափշտակողացն ըզնա: (271 ա) (ն. Լ. Նոր կիւրակէին) (կ.լ 5) Ի**սկ արքն վեց, տապար ի ձեռին ունելով զխաչին խորհուրդն,** հին և նոր կտակարանաւքս, որ կոտորեցին, բարձին ըզգայթակղութիւն յերկրէ: Ի ձեռն խաչազգեաց մարմնացե(կ.լ 5)լոյ բանին հաւր: ի**սկ արծաթի (կ.լ 5) զանկակն ի ստորոտ հանդերձին, նռնաձեւք:** Զլուսապայծառ քարոզութիւն ընդ տիեզերս հնչեցեալ յառաք(կ.լ 5)ելոցն և վակաս երկոտասան (կ.լ 5) ակամբք, որ ընդելուզեալ էր ի կուրծս՝ քահանայապետին: աւրինակ երկոտասան առաքելոցն, ազգի ազգի, և գունակ գունակ: երփներփն փայլատակութեամբ ակամբք պատուականութեամբ, որ բերեր զնմանութին երկնից՝ պայծ (կ.լ 5) առութեամբք լուսավորացն[2]: վակ(կ.լ 5)ասն քառանիւթեայ ի յոյսն Բ –քահանայապետին Ա- բարձեալ, յորում ոսկին սուրբ խառնեալ: աստուածութիւն խառնեալ ի չորս նիւթ բնութես մեր և միացեալ իսկ ոսկէգոյն թիթղանքն զհոգւոյն սրբոյ շնոհաւք զխաչազգեացեալսն ընդ Քրիստոս, ի վեր տանելով, ի հայրական խորան փառացն»[3]:

Այստեղ մեր խնդիրը չէ բոլոր քրիստոնեական խորհրդանշանների մեկնաբանությունը, որոնք, առանց վարանելու, կարելի է ասել, որ այս հատվածում ժամանակային կամ օրացույցային նշանակություն ունեն: Սակայն չնշել չենք կարող, որ 12 առաքյալների հիշատակությունը աներկբայորեն Խավարածրի հարթության վրա գտնվող 12 կենդանակերպերի ակնարկն է, հատկապես, որ ուղղակիորեն ասվում է, թե լուսավորացն նմանությամբ, նշվում են դրանք իբրև գունակ-գունակ, երփներանգ ակներ (= լուսատուներ)[4]:

---

[1] Պատահական չէ այստեղ Դավթի անվան հիշատակությունը, իսկ ինչպես հայտնի է նրա անվան է առնչվում վեցթևյան աստղը կամ Դավթի աստղը: Պատահական չէ նաև հենց այս հատվածում թվով 6 այրերի հիշատակությունը, որոնց ձեռքին տապար կա:

[2] Հովի. Օձնեցին ուղղակիորեն խնդիրը մեկնաբանում է երկնքի լուսատուների հետ համեմատության մեջ դնելով, այսինքն քրիստոնեական խորհրդաբանությունը ուղղակիորեն առնչվում է աստղագիտությանը:

[3] ՄՄ ձեռ. թիվ 2819, էջ 270 ա-274 ա:

[4] Տարբեր ժամանակներում և տարբեր ժողովուրդներ ևս տարվա եղանակները, ամիսներն ու, լուսատուները արտահայտել են ամենատարբեր կոդերով՝ մետաղական - ոսկի, արծաթ, պղինձ, թանկարժեք քարերով, գունային, ծաղկային կամ ծառերով:

Զարմանալին այն է, որ Հովհան Օձնեցին այս հատվածում նույնացնում է խաչն ու տապարը, որը որոտաբեր աստվածության՝ հայոց մեջ Տորք Անգեղի զենքն է[1], և հենց այս հատվածում ավետումն է հիշատակվում, որը կատարվում է արծաթե զանգակների (= Գաբրիել հրեշտակի) միջոցով: Փաստորեն, արծաթե զանգակները, ինչպես նաև նուռը դարձել են ավետաբեր հրեշտակի, Անգղի խորհրդանիշը: Ավելացնենք նաև, կարող ենք առնչել նաև վեցթևյան և ութթևյան աստղերի հետ: Ինչպես և, ապրիլի 7-ից 14-ը ուղղակիորեն, բեղմնավորության ստույգ ժամանակ է:

Հովհ. Օձնեցու ճառի այս հատվածի համար ասենք, որ ակնարկվում է գարուն եղանակը (ոսկի):

Մարիամ Աստվածածնի տոնը միջնադարում ուղղակիորեն կապել են Նիզակավոր աստղի հետ[2], այն է այդ օր, ինչպես միշտ երկնքում երևացել է նիզակավոր աստղը: Եթե այս նիզակավոր աստղը Անկաստեղն է:

Կատարենք մի փոքր եզրահանգում՝ Անգեղը, հրեշտակը, զանգակն ու նուռը միևնույն նշանակությունն ունեն, առնչվում են անշարժ ամսաթվով՝ ապրիլի 7-ին տոնվող Մարիամ Աստվածածնի Ավետման զուգադիպող Քրիստոսի Հարության տոներին հաջորդող 8-րդ օրվա հետ[3]:

Ամփոփելով ասենք, որ տոմարական Անկաստեղ անվանումը չի նշանակում որևէ աստղի հելիոտիկ անկում: Հատկապես այդ անվան Զանկ-բազմաստեղ հոմանիշը վկայում է, որ «ԱՆԿ» կամ «ԶԱՆԿ» անունով համաստեղությունն է: Այդ անունը վերաբերում է «ԿԱՐԱՊ» կամ «ԿՐԻԱ» համաստեղությանը, թեև Սուրբ երրորդության անձերի նմանողությամբ դրան կարող ենք համադրել նաև «ՔՆԱՐ» և «ԱՐԾԻՎ» համաստեղությունները կամ այլ կերպ ասած Երկնքի Ամառային-աշնանային եռանկյունին: Հուլյան տոմարով անշարժ ապրիլի 14-ին նշվելով՝ առնչվում է հեթանոսական շրջանի որոտաբեր աստվածության Տորք Անգեղի, առասպելական թռչունների պաշտամունքի, աստղագիտության հետ:

Սակայն ամենակարևորը այն ուղղակիորեն առնչվում է Քրիստոսի

---

[1] Նույն զենքը՝ ոսկե ուռը ձեռքին Քրիստոսն իջնում և ցույց է տալիս, թե որտեղ պետք է կառուցվի մայր տաճարը:

[2] **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-8-րդ դարեր), Եր., 1999:

[3] Նոր կիրակիի ժամանակը հաշվելով Զատկի կիրակին ներառած մինչև հաջորդ կիրակի՝ 8-րդ օրը, մեր կարծիքով առնչվում է ութթևյան աստղի հետ: Միջնադարյան մանրանկարներում բազմիցս Մարիամ Աստվածածնի թիկնոցի վրա պատկերված ենք տեսնում կա՛մ վեցթևյան, կա՛մ ութթև աստղը:

Հարության ու Ավետման Աստվածածնի տոների հետ, այդու՝ բնության հարության ու պտղաբերության (հող, անասուն, մարդ):

Անգղ

սպիտակագլուխ անգղ

հավանգ - սանդ



արաքնեա կրյա



քնար

զանգ

նուռ

ԱՆԿԱՍՏԵՂ
(Տոմարական մի եզրՈՒՅԹի հետքերով)

Գայանե Սիմոնյան

Բանալի բառեր՝ *տոմար, քրիստոնեական Զատկի կամ Քրիստոսի Հարության տոն, Աւետման Աստվածածնի տոն, Տորք Անգեղ, դիցաբանություն, աստղագիտություն, «ԿԱՐԱՊ», «ՔՆԱՐ» և «ԱՐԾԻՎ» համաստեղություններ, խորհրդանշաբանություն՝ սիմվոլիկա-զանգ, նուռ, կրիա:*

АНКАСТЕГ
(ПО СЛЕДАМ ОДНОГО КАЛЕНДАРНОГО ТЕРМИНА)

Гаяне Симонян

Ключевые слова: *календарь, праздник христианской Пасхи или Воскресения Христова, праздник Благовещения Пресвятой Богородицы, Торк Ангех, мифология, астрономия, созвездия “Лебеди”, “Лиры” и “Орла”, символоведение – символика, колокол, гранат, черепаха.*

Календарное название Анкастег означает не падение или захождение какой-либо звезды, к чему может отсылать внешняя семантическая структура слова. Тем более, что синоним данного слова Занкбазмастег свидетельствует, что это – созвездие по имени “Занк” или “Занг” (“колокол”), которое известно как созвездие “Лебедя”. Однако, по примеру подражания лиц Святой Троицы, последний можно соединить с созвездиями “Лиры” и “Орла”, образуя так называемый Летний Треугольник неба. Отмечаясь непреходящим днем – 14 апреля – астрономическое явление “Анкастег” связано с языческим божеством-громовержцем Торком Ангехом, поклонением мифическим птицам. Но самое главное, оно непосредствнным образом касается праздникам Воскресения Христова и Благовещения Пресвятой Богородицы.

ANKASTGH
(ON THE TRACKING OF THE TERM)

Gayane Simonyan

Key words: *calendar, the feast of Christian Fast, Feast of Annunciation, Tork Anguegh, mythology, astrology, the constellations of 'Karap/Swan', 'knar/Arpha', 'Artsiv/Eagle', symbols, pomegranate, bell, turtle.*